Արձանագրություն 3

ՀՀՄՆԳՀԾՁԲ-19/73 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով տեխնիկական հսկողության ծառայությունների գնման գործընթացի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

29.11.2019թ.
ժ.11:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝	Հրանտ Հովսեփյան /գնահատող/
Հանձնաժողովի անդամ՝	Հրաչյա Թարխանյան /գնահատող/
	Արմեն Հակոբջանյան /գնահատող/
	Խորեն Մնացականյան /բացող/
	Արմինե Ստեփանյան /բացող/
Հանձնաժողովի քարտուղար՝	Արսեն Սողոմոնյան
Բացակայում էր՝	Խորեն Մնացականյան

1. Որակավորման փաստաթղթերի գնահատման մասին
(Հրանտ Հովսեփյան)

1.1 «ԱՐՍՏԱԿ-ԻՄՊԵՔՍ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում և հրավերով սահմանված կարգով ներկայացրել է հրավերով նախատեսված փաստաթղթերը:

1.2 ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեից ստացվել է համապատասխան եզրակացությունը:

2. Որակավորման փաստաթղթերի գնահատման արդյունքում արձանագրված անհամապատասխանությունների մասին
(Հրանտ Հովսեփյան)

2.1 «ԱՐՍՏԱԿ-ԻՄՊԵՔՍ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված և ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեից ստացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում արձանագրվեցին հետևյալ անհամապատասխանությունները.

2.1.1 ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեից ստացված եզրակացության համաձայն «ԱՐՍՏԱԿ-ԻՄՊԵՔՍ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ չունի հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով Օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ, սակայն չի բավարարում «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմաններին, համաձայն որի հայտը ներկայացնելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը չպետք է պակաս լինի սույն ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկից:

2.1.2 Ներկայացված՝ «Կասկադ Էլիտ Բիլդինգ» ՍԿ-ի հետ 12.07.2016թ. կնքված N 1 պայմանագիրը չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, քանի որ ներկայացված հանձնման-ընդունման արձանագրությամբ հնարավոր չէ գնահատել պայմանագրով մատուցված ծառայությունների պատշաճ կատարված լինելը:

2.1.3 Ներկայացված՝ ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության հետ 17.10.2019թ. կնքված N ԳՀԾՁ-ԱԻՆ-19/72-1 պայմանագիրը թերի է, բացակայում են N 2, N 3 և N 3.1 հավելվածները: Հաշվի առնելով, որ պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումը ավարտված չէ, ուստի այն չի կարող գնահատվել որպես պատշաճ կատարված պայմանագիր:

2.1.4 Ներկայացված Հավելված 3.2-ում հիմնական աշխատակազմում ներառված.

- մասնագետների որակավորումը չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, ինչպես նաև ներկայացված դիպլոմներին, բացի այդ նշված սյունակում ներկայացված է աշխատանքային փորձին վերաբերող տեղեկատվություն:
- մասնագետների գործունեության ոլորտը և կատարված աշխատանքը սյունակում ներկայացված տեղեկատվությունը չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին:
- Համբարձում Ղուկասյանի աշխատանքային փորձի ժամանակահատվածը չի համապատասխանում հրավերով պահանջվող նվազագույն մասնագիտական փորձի համար սահմանված պահանջներին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0:

3. Գնահատման գործընթացի կասեցման վերաբերյալ
(Հրանտ Հովսեփյան)

3.1 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ թիվ 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 47-րդ կետը՝ կասեցնել գնահատման գործընթացը և առաջարկել «ԱՐՍՏԱԿ-ԻՄՊԵՔՍ» ՍՊԸ-ին երեք աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0:

4. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման ժամանակացույցը հաստատելու մասին
(Հրանտ Հովսեփյան)

4.1 Հանձնաժողովի հաջորդ նիստն անցկացնել գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրած անհամապատասխանությունների մասով «ԱՐՍՏԱԿ-ԻՄՊԵՔՍ» ՍՊԸ-ի կողմից շտկված փաստաթղթերի ներկայացումից հետո՝ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետներում, ժամը 11:00-ին, ք. Երևան, Կառավարական տուն 2, 608 սենյակ, հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0:

Գնահատող հանձնաժողով՝

---------- Հ. Հովսեփյան /նախագահ/

---------- Հ. Թարխանյան

---------- Ա. Հակոբջանյան

---------- Ա. Ստեփանյան

---------- Ա. Սողոմոնյան /քարտուղար/